ԱՄԵՆԱԶՈՐԵՂ ՈՒԺԸ ԳԻՏԵԼԻՔՆ Է

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ-ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

Թիվ 5(162)
Մայիս,
2013թ.

ԻՆՔՆՈՐՈՇՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Մայիսի 15-18-ը Հարավային Օսիայի մայրաքաղաք Ցխինվալում տեղի ունեցավ Ինքնորոշված պետությունների համալսարանների ասոցիացիայի 2-րդ համագումարը, որին մասնակցեցին Արցախի պետական համալսարանի ռեկտոր Ստեփան Դադայանը և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Արտեմ Աբրահամյանը:

Ասենք, որ Ինքնորոշված պետությունների համալսարանների ասոցիացիան ստեղծվել է 2007թ. նոյեմբերի 1-ին: Առաջին հիմնադիր համագումարը տեղի է ունեցել Աբխազիայում՝ Սուխում քաղաքում: Ասոցիացիայի, որի նախագահն է Մերձդնեստրի պետական համալսարանի ռեկտոր, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Բերիլը, կազմի մեջ են մտնում Մերձդնեստրի, Աբխազիայի, Հարավային Օսիայի և Արցախի պետական համալսարանները: Հիմնական նպատակը նշված համալսարանների գիտակրթական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելն է՝ Ռուսաստանի Դաշնության գիտակրթական ոլորտի հետ ինտեգրման և կապերի սերտացման հիման վրա: Ասոցիացիան մշտապես փոխգործակցում և համագործակցում է ՌԴ կրթության և գիտության նախարարության հետ: Շուրջ 6 տարվա գոյության ժամանակաընթացքում միջազգային լուրջ իրադարձություններ են տեղի ունեցել, ինչպիսիք են, օրինակ, 2008 թվականին ՌԴ-ի կողմից Աբխազիայի և Հարավային Օսիայի հանրապետությունների անկախության ճանաչումը:

Համագումարին ներկա էր և ուղերձ էր հղել Հարավային Օսիայի Հանրապետության նախագահ Լեոնիդ Տիբիլովը:

Ասոցիացիայի գործունեության հինգ տարվա արդյունքների ամփոփմամբ հանդես է եկել նախագահ Ստեփան Բերիլը: Իսկ Ինքնորոշված պետությունների համալսարանների ռեկտորները հանդես են եկել իրենց պետությունների միջազգային ճանաչման ուղղությամբ համալսարանների կողմից տարվող աշխատանքների մասին տեղեկատվությամբ: Իր ելույթում ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանն անդրադարձել է 2008թ. Հարավային Օսիայում տեղի ունեցած ողբերգական դեպքերին: Խոսելով ասոցիացիայի անցած ուղու մասին՝ ԱրՊՀ ռեկտորն ընդգծել է նրա անդամներից յուրաքանչյուրի քրտնաջան աշխատանքը: Ի՞նչ է տվել Ասոցիացիան իր կազում ընդգրկված համալսարաններին՝ այս մասին Ս. Դադայանը ելույթում նշել է. «Մեր պետություններն ունեն քաղաքական զարգացման և կայացման նույն ճանապարհը: Մեր համալսարանների առջև նույն խնդիրներն էին ծառացած: Մենք՝ բուհերի ղեկավարներս, միմյանց տեղեկացնելով մեր համալսարաններից յուրաքանչյուրի առանձնակի գործունեությանն ու տիրող իրավիճակին, կարողացանք առավել ընդունելի ուղի մշակել այս կամ այն խնդրի լուծման համար, որոնք անհանգստացնում էին մեզ: Մեր բոլոր համալսարանները տուժել են պատերազմական գործողություններից՝ բառիս բուն իմաստով, իսկ Հարավային Օսիայի պետական համալսարանը պատերազմի հորձանուտում է հայտնվել, դժբախտաբար, երկու անգամ: Ուստի, համալսարանների վերականգնման և զարգացման աշխատանքների փորձով կիսվելը եղել և մնում է ռեկտորներիս առաջին և գլխավոր խնդիրը»:

Ս. Դադայանը չի շրջանցել նաև բարձրագույն կրթության համակարգում ներդրվող բարեփոխումները, մասնավորապես՝ Բոլոնյան սկզբունքները. անցումը դիպլոմավորված մասնագետներից բակալավրիատին և մագիստրատուրային, կրեդիտային համակարգ, ընթացիկ քննությունների և ստուգարքների անցկացում, համակարգչային-թեստային եղանակով ուսանողների գիտելիքների ստուգում ու գնահատման ժամանակակից մեթոդներ և այլն: Դա դասախոսական կազմի հետ տարվող մեծ աշխատանք է՝ նրանց բարոյահոգեբանորեն նախապատրաստելու առումով, որպեսզի հնարավոր լինի իրականացնել վերոնշյալ խնդիրների լուծումը, ասել է Արցախի մայր բուհի ղեկավարը:

Հարավային Օսիայի նախագահի հրամանով ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանին շնորհվել է հանրապետության գիտության վաստակավոր գործչի կոչում (ի դեպ, Ս. Դադայանը նաև Հարավային Օսիայի պետական համալսարանի պատվավոր պրոֆեսոր է), իսկ պրոռեկտոր Արտեմ Աբրահամյանը պարգևատրվել է Հարավային Օսիայի անկախության 20-ամյակի հուշամեդալով:

Համագումարի օրակարգային հարցերից մեկը վերաբերում էր Ինքնորոշված պետությունների համալսարանների ասոցիացիայի նախագահի ընտրություններին. այդ պաշտոնում վերընտրվել է Ստեփան Բերիլը:

Վերջում հնչեցվել է հայտարարության տեքստը, որում մասնավորապես նշվում է, որ համագումարի մասնակիցները կազմակերպության անվանումը նոր իրողություններին համապատասխանեցնելու նպատակահարմարության են հանգել: Կապված Աբխազիայի և Հարավային Օսիայի հանրապետությունների միջազգային կարգավիճակը փոխվելու հետ, համաձայն ռեկտորների խորհրդի միաձայն որոշման, կազմակերպությունը կանվանվի՝ Նորանկախ պետությունների համալսարանների ասոցիացիա:

Հայտարարության մեջ Ասոցիացիայի անդամները նաև խորին երախտագիտություն են հայտնել իրենց պետությունների ղեկավարներին՝ կազմակերպության գործունեությանը մշտապես աջակցելու համար, ինչը բխում է այդ հանրապետությունների զարգացման հետաքրքրություններից:

«ԱՃՈՂ ՍԵՐՈՒՆԴԸ ՊԵՏՔ Է ԼԱՎ ՍԵՐՏԻ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԴԱՍԵՐԸ»

ԱրՊՀ-ում ուսանողների հետ հանդիպմանն ասել է ԼՂՀ պաշտպանության նախարար Մովսես ՀԱԿՈԲՅԱՆԸ

Մայիսյան եռատոնի կապակցությամբ, ստեղծված ավանդույթի համաձայն, Արցախի պետական համալսարանում մայիսի 6-ին արիության դաս անցկացրին ԼՂՀ պաշտպանության նախարար, Պաշտպանության բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանն ու կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը:

Ավանդույթի համաձայն՝ հյուրերը նախ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Արցախյան գոյամարտում զոհված ուսանող-ազատամարտիկների հիշատակին:

Բացման իր խոսքում ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանը, շնորհավորելով ներկաներին Մայիսյան տոների կապակցությամբ, կարևորեց դրանցից յուրաքանչյուրի դերը հայ ժողովրդի կյանքում:

Պաշտպանության նախարարն իր ելույթում անդրադարձավ հայ ազգի պատմության ամենահիշարժան դրվագներին՝ յուրօրինակ էքսկուրս կատարելով Հայրենական մեծ պատերազմում մեր ժողովրդի ունեցած ավանդից մինչև ներկա ռազմաքաղաքական իրադարձություններ: «Հայ ժողովրդի պատմության մեջ մայիս ամիսն առանձնացնում ենք իբրև մաքառման, հերոսացման ու հաղթանակների ամիս,- այսպես սկսեց արիության դասը գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը:- Մայիսի 9-ը մեզ համար եռակի խորհուրդ ունի. նշում ենք ոչ միայն ֆաշիզմի դեմ տարած Մեծ հաղթանակի օրը, այլև Շուշիի փառավոր ազատագրման հերթական տարեդարձը: Քսանմեկ տարի առաջ այս օրերին խրամատներում էր գրվում Հայոց նորօրյա սխրանքների պատմությունը: Մեզ պարտադրված պատերազմում ապացուցեցինք, որ պատրաստ ենք նաև զենքով պաշտպանել մեր ժողովրդի ազատության, անկախության և խաղաղ կյանքի իրավունքը: 1992թ. Մայիսի 9-ին իրենց հերոս պապերի ու հայրերի սխրանքը կրկնեցին քաջ հայորդիները՝ բազմապատկելով հայոց զենքի փառքն ու պատիվը»:

Ռազմական գերատեսչության ղեկավարի խոսքերով՝ Շուշիի ազատագրմամբ վերստին նոր դռներ բացվեցին մեր ժողովրդի խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի, արարման ու երկրի շենացման համար: Այս հաղթանակը ևս հայ ժողովուրդը նվաճեց մեծագույն զոհողությունների գնով, ինչն անհնար է ջնջել մեր հիշողությունից:

Անդրադառնալով Շուշիի ազատագրմանը՝ գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը ներկայացրեց դրա անհրաժեշտության օբյեկտիվ պատճառները: Ադրբեջանի կողմից մեր դեմ սանձազերծված պատերազմի առաջին իսկ օրերից Շուշին իր բարձր դիրքի շնորհիվ հակառակորդի համար դարձել էր ռազմական հենակետ, որտեղից մշտապես հրետակոծվում էին մայրաքաղաք Ստեփանակերտն ու շրջակա գյուղերը: Համակերպվել իրավիճակի հետ՝ նշանակում էր ստույգ կործանման դատապարտել ոչ միայն Ստեփանակերտն ու հարակից գյուղերը, այլև Արցախն ամբողջությամբ: Ահա թե ինչու հրատապ էր Շուշիի ռազմագործողությունը, որը հաջողությամբ պսակվեց Մայիսի 9-ին:

Պաշտպանության նախարարը հերթով անդրադարձավ նաև մյուս ռազմագործողություններին: Շուշիի փառապանծ հաղթանակին հետևեցին Քաշաթաղի (Լաչինի) միջանցքի բացումը, Արցախի անվտանգության գոտու ստեղծումը: Շուշին դարձավ պատվար՝ հայկական զինուժի հետագա հաջողությունների համար: «Շուշիի ազատագրումով հայ զինվորը հասկացավ իր բազկի ուժն ու ռազմական հնարամտության սահմանը: ԼՂ շատ բնակավայրերի ազատագրում հենց Շուշիի արդյունքն է: Աճող սերունդը պետք է լավ սերտի պաշտպանության բանակի ստեղծած դասերը»,- ասաց Մովսես Հակոբյանը՝ պարզաբանելով, թե ինչու է նրա ստեղծման օր համարվում Շուշիի ազատագրման օրը:

Այնուհետև Պաշտպանության բանակի հրամանատարն անդրադարձավ հետպատերազմյան տարիներին Արցախի զինված ուժերի ձեռքբերումներին, բանակաշինության գործընթացին: ԼՂՀ ՊԲ-ն այն բանակներից է, որ զինադադարի կնքումից հետո իր սուրը պատյան չդրեց, այլ եղածին նոր սրեր ավելացրեց, քանզի վերջնական հաղթանակի հասնելու համար անելիք դեռ ունի:

Ըստ այդմ՝ եղած ստորաբաժանումների քանակը ոչ թե նվազեց, այլ ավելացավ, և այսպես շարունակ օրեցօր հզորանում ու կատարելագործվում է մեր ժողովրդի անվտանգության երաշխավորը: Այսօր ԼՂՀ պաշտպանության բանակն ի զորու է ոչ միայն արժանի հակահարված տալ թշնամու ցանկացած ոտնձգության, այլև պատերազմի վերսկսման դեպքում մարտը տեղափոխել Ադրբեջանի տարածք: «Թշնամին պետք է հասկանա, որ ԼՂՀ-ի հետ ռազմական սպառնալիքով խոսելն անիմաստ է»,- ասաց ՊԲ հրամանատարը:

Իր ելույթում ԼՂՀ ԿԳ նախարարը խոսեց Արցախյան պատերազմի տարիներին համակարգի գործունեության մասին: Հանրապետության կրթօջախներում չեն դադարեցվել ուսումնական պարապմունքները: ԱրՊՀ ուսանողները (տղաները) գրիչը փոխարինել են զենքով, բայց մնացել ուսանողության շարքերում: Զինվորական հագուստով՝ զենքը ձեռքին, նրանք գալիս ու հանձնում էին քննությունները: Ծանր էր իրավիճակը, չկային պայմաններ՝ բոլոր առումներով: Իսկ այսօրվա ուսանողության համար ստեղծված է ամեն ինչ՝ սկսած ժամանակակից տեխնոլոգիական միջոցներից, գեղեցիկ կահավորված լսարաններից ու հարմարավետ պայմաններից… Դիմելով երիտասարդությանը՝ նախարար Սլավա Ասրյանն ասաց. «Առկա ձեռքբերումների շարունակողը դուք եք լինելու: Դուք եղածին ավելացնելու բան ունեք, քանզի այս երկրի ծնունդն եք, նրա վաղվա ապագան: Եվ կարևոր է, թե ինչ վերաբերմունք է ձևավորվում ձեր գիտակցության մեջ՝ պետության ներկայի ու ապագայի հանդեպ: Դաստիարակվեք միայն ազգային գաղափարներով, և դա կտանի մեզ դեպի վերջնական հաղթանակ»:

Ուսանողության անունից շնորհակալություն հայտնելով հյուրերին՝ ուսանողական վարչության նախագահ Գոհար Ազրյանը նվերներ հանձնեց նախարարներ Մ. Հակոբյանին և Ս. Ասրյանին:

Լաուրա ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մայիսի 20-ին Արցախի պետական համալսարանում մեկնարկեցին 2012-2013 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունները, ինչպես նաև՝ ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի պաշտպանությունը: Ինչպես տեղեկացրեց ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Արտեմ Աբրահամյանը, այս տարի մայր բուհը կունենա 1032 շրջանավարտ, որից 790 բակալավր և 242 մագիստրոս ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման բաժիններից (28 մասնագիտությունների գծով): Ա.Աբրահամյանի խոսքերով՝ բուհի ավարտողների շրջանում զգալի թիվ են կազմում խելացի, բանիմաց կադրերը, որոնցով համալսարանը, հիրավի, կարող է հպարտանալ:

Մեր այն հարցին, թե ինչով են տարբերվում այս քննությունները՝ նախորդ տարվա համեմատությամբ, պրոռեկտորը պատասխանեց, որ առանձնահատուկ ոչինչ չկա. ինչպես նախորդ տարիներին, այս անգամ էլ քննական հանձնաժողովների նախագահների մեծ մասը հրավիրվել է Հայաստանի առաջատար բուհերից: Ավարտական աշխատանքների գիտական ղեկավարների մի մասը նույնպես հայաստանյան գիտնականներ են: Այսուհանդերձ՝ կա մի կարևոր տարբերություն. այն, որ տարեցտարի բարձրանում է թե՛ քննությունների կազմակերպվածության և թե՛ ուսանողների գիտելիքների մակարդակը: Այս մասին են փաստում նաև առարկայական քննական հանձնաժողովների նախագահները: «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության առարկայական հանձնաժողովի նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր Լիլիթ Արզումանյանի խոսքերով՝ առաջին անգամ է Արցախում մասնակցում քննություններին և անչափ տպավորված է կազմակերպչական աշխատանքներից: Ինչ վերաբերում է ուսանողների գիտելիքների մակարդակին, նա նշեց, որ այդ մասին դեռ վաղ է խոսել: «Ես շատ կցանկանայի, որ սերնդափոխության հարց լուծվեր,- ասաց Լիլիթ Արզումանյանը,- այսինքն բուհի լավ մասնագետները կարողանան ընտրել լավագույն ուսանողներին, աշխատեն նրանց հետ մի քանի տարի, որպեսզի սահուն կերպով անցնեն սերնդափոխության: Դա աշխատատար, բայց երկրի կայացման համար անհրաժեշտ գործընթաց է: Մեր սերունդը շատ մեծ խնդիր լուծեց. հող ազատագրեց, այն դեպքում, երբ մենք տասը դար հող չէինք ազատագրել: Բայց դրանից հետո չկարողացավ պահել այդ արժեհամակարգը, մենք կուլ գնացինք դրսից եկած հոսանքներին ու կործանեցինք մեր սերնդին: Սա ողբերգություն է, որում մեծ է մեր մեղքը: Քանի որ Ղարաբաղյան շարժման, ազատամարտի առաջամարտիկը եղավ Արցախը, ես շատ կցանկանայի, որ մեր արժեհամակարգի վերականգնման գործում էլ նա դառնա առաջամարտիկ: Արցախը փոքր է և պարտավոր է լինել զգոն ու փոխանցել այն մեզ: Իսկ զգոնությունը դա ազգի ժառանգին, հետնորդին ազգային մտածողությամբ դաստիարակելու, ազգին նվիրվելու, նրա ցավով ապրելու կարողությունն է: Սա մեր խնդիրն է, որ պետք է լուծենք»:

«Լրագրություն» մասնագիտության առարկայական հանձնաժողովի նախագահ, Արցախի հանրային հեռուստառադիոյի խորհրդի նախագահ Նորեկ Գասպարյանի խոսքերով՝ կան խելացի ուսանողներ, որոնք ապագայում կարող են համալրել լրագրողների շարքերը: «Գոհացուցիչ է այն փաստը, որ կան ուսանողներ, ովքեր հստակ պատկերացում ունեն հեռուստատեսության գործունեության և թերթի աշխատանքի մասին, գիտեն՝ ինչ է խոսքի ազատությունը: Ունենք բավական գրագետ, մտածող, տրամաբանող, տեխնոլոգիայի ժամանակակից միջոցներին տիրապետող ուսանողներ, ինչը, հիրավի, հաճելի է»,- ասաց Ն. Գասպարյանը:

Թե շրջանավարտներից քանիսին կհաջողվի համալրել մեր հանրապետության տարբեր ոլորտների մասնագետների շարքերը՝ առայժմ այդ մասին ոչինչ չենք կարող ասել: Զինվենք համբերությամբ, և ժամանակը ցույց կտա ամեն ինչ:

ԿԱՅԱՑԱՎ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 29-ին տեղի ունեցավ Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստը, որի օրակարգում ընդգրկված էին ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի և ամփոփիչ ատեստավորման քննությունների ընթացքի մասին դեկանների տեղեկատվության և ԱրՊՀ խորհրդի անդամների ընտրության մասին հարցերը, ինչպես նաև՝ այլ հարցեր:

Գիտխորհրդի 39 անդամներից նիստին ներկա էին 34-ը (հինգ հոգի բացակայում էին հարգելի պատճառով):

ԱրՊՀ ֆակուլտետների դեկանները հանգամանալից ներկայացրին ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի և ամփոփիչ ատեստավորման քննությունների ընթացքը: Ընդհանուր առմամբ նշվեց, որ ամեն ինչ անցնում է հանգիստ, խաղաղ մթնոլորտում, խախտումներ և դժգոհություններ չեն արձանագրվել:

ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանը, բարձր գնահատելով կատարված աշխատանքները, ասաց, որ դրանք գոհացնող են: Արցախի մայր բուհի ղեկավարն անդրադարձավ ուսման վարձավճարների առումով պարտքերի մարմանը և դեկաններին հանձնարարեց ուժեղացնել վերահսկողությունը: Ինչպես նախորդ նիստում, այս անգամ ևս Ս. Դադայանը առաջարկեց շրջանավարտների դիպլոմների հանձնման արարողությունը կազմակերպել հանդիսավոր պայմաններում, որպեսզի այն հիշվի բուհն ավարտածների կողմից:

Այլ հարցերի շրջանակում գիտխորհրդի նիստը հաստատեց և տպագրության երաշխավորեց մի քանի ուսումնամեթոդական ձեռնարկներ:

ԱրՊՀ ռեկտորի հրամանով մանկավարժության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Արզիկ Մխիթարյանը մայր բուհի կայացման և զարգացման գործում ունեցած զգալի ավանդի ու ներդրման համար պարգևատրվեց համալսարանի ոսկե մեդալով:

Օրակարգի առանցքային հարցը համալսարանի խորհրդի նոր անդամների ընտրության մասին էր: Ներկայացնելով այն՝ ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանը նշեց, որ ներկայիս խորհուրդը գործում է արդեն հինգ տարի և որ նրա առջև շատ մեծ խնդիրներ են դրված. ռեկտորի ընտրության հարցը, բյուջեի և խորհրդի 5-ամյա ծրագրի հաստատումը: Համաձայն կանոնակարգի, հինգ տարին լրանալուց պետք է ընտրվի խորհրդի նոր կազմ:

Ընտրվեց հաշվիչ հանձնաժողովի կազմ՝ վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Վալերի Ջավադյանի նախագահությամբ:

Ձևավորվելիք նոր խորհրդին անդամակցելու նպատակով ֆակուլտետների կողմից ներկայացվել էր 18 անձանց թեկնածություն: Նրանցից երեքը՝ Վահրամ Բալայանը, Կարեն Ներսիսյանը և Իրինա Իշխանյանը ինքնաբացարկ տվեցին: Մնացած 15 հոգուց պետք է ընտրվեր յոթը:

Փակ գաղտնի քվեարկության արդյունքում խորհրդի նոր անդամներ ընտրվեցին Արտեմ Աբրահամյանը, Վալերի Ավանեսյանը, Գագիկ Բաղունցը, Վոլոդյա Միրզոյանը, Արզիկ Մխիթարյանը, Հովիկ Մուսայելյանը և Էլեոնորա Հայրապետյանը:

Լուսիանե ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ, ՈՐ ԸՆՏՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃԻՇՏ Է

ԱրՊՀ գիտխորհրդի նիստում

Մայիսի 3-ին տեղի ունեցավ Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի հերթական նիստը, որի օրակարգը բավական հագեցած էր: Առաջին երկու հարցերի՝ երկրորդ կիսամյակի ընթացիկ հարցումների արդյունքների և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի ու ամփոփիչ ատեստավորման քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին համապատասխան տեղեկատվությամբ հանդես եկան ֆակուլտետների դեկանները:

Մանկավարժության ֆակուլտետում նշված կիսամյակում նախատեսված էին եզրափակիչ գնահատման և առանց եզրափակիչ քննություններ ու ստուգարքներ: Դրանք կազմակերպվել են ըստ ժամանակացույցի: 695 ուսանողի ստուգման արդյունքում 6-8 միավոր է վաստակել ուսանողների 38,4 տոկոսը, 1,3-5,8 միավոր՝ 50 տոկոսը (350 ստուգումից): 1 և ցածր միավորներ է ստացել ուսանողների 6,1 տոկոսը (42 ստուգումից): Չեն ներկայացել 36 ուսանող կամ 5,1 տոկոսը: Սրանք առանց եզարափակիչ քննությունների ստուգման արդյունքներն են: Եզրափակիչ քննությունների ընթացքում ստուգվել է 581 ուսանող, որից 6-8 միավոր ստացել է 294 ուսանող կամ 50,6 տոկոսը, 1,3-5,8 միավոր ստացել են 253 ստուգումների դեպքում, որը կազմում է 43,5 տոկոսը: 1 և ցածր միավոր է գնահատվել 21 աշխատանք, որը կազմում է 3,6 տոկոսը: Չեն ներկայացել 13 ուսանողներ, այսինքն՝ 2,2 տոկոսը: Դեկան Արզիկ Մխիթարյանի խոսքերով՝ այս կիսամյակում ևս առանձնակի ցնցումներ չեն եղել. արդյունքները գրեթե նույնն են՝ ինչ 1-ին կիսամյակում էր: Առաջնորդվել են գործնականի ժամանակ թեստերի քննարկմամբ (160 թեստ): Դիտարկումներից պարզվել է, որ ուսանողների կողմից դժգոհություններ չեն եղել, բացի մի դեպքից, երբ տեխնիկական պատճառներով խմբի ամենալավ սովորողը ստացել է 7,8 միավոր: Դեկանի հավաստմամբ՝ թեստերի քանակի ավելացումը նպաստել է քննությունների արդյունքների օբյեկտիվությանը: Բայց կարելի է էլ ավելի նպաստավոր ուղիներ փնտրել՝ օբյեկտիվությանը ավելի մոտեցնելու առումով:

Պատմության և քաղաքագիտության ֆակուլտետում, ինչպես նշեց դեկան Վալերի Ավանեսյանը, ընթացիկ հարցումներին մասնակցել է 273 ուսանող, որից 133-ը ստացել է 6-8 միավոր, 1,3-5,8 միավոր են ստացել 88 ուսանողներ, իսկ 1 և ցածր միավոր՝ 37 ուսանող: Չի ներկայացել 11 հոգի կամ հարցման ենթակա ուսանողների 4 տոկոսը: Վ. Ավանեսյանի հավաստմամբ՝ ցուցանիշները նախորդ կիսամյակի համեմատությամբ ավելի բարձր են, ինչը պայմանավորված է թեստերի կարգավորմամբ:

Օտար լեզուների ֆակուլտետում նախորդ կիսամյակի համեմատությամբ նույնպես բարձր են ցուցանիշները. եթե անցած կիսամյակում 6-8 միավոր ստացածների թիվը կազմել է 36 տոկոս, ապա ներկայումս թիվը հասել է 55-ի: Ֆակուլտետի դեկան Էլեոնորա Հայրապետյանը հատկապես առանձնացրեց 1-ին կուրսեցիների արդյունքները, որոնք ավելի բարձր են: Ամբիոնի կողմից որոշում էր կայացվել թեստերը տալ ուսանողներին, իսկ պատասխանները չտալ: Եվ պարզվել է, որ արդյունքներն ավելի լավ են, քան նախորդ դեպքում, այսինքն՝ երբ տրվել են թեստերն ու պատասխանները, ասաց Է. Հայրապետյանը: Նրա հավաստմամբ, սակայն, տեխնիկական որոշ թերություններ են եղել: Միաժամանակ առաջարկեց ավելացնել թեստերի քանակը և ընթացքում որոշ շտկումներ կատարել:

Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում քննությունների արդյունքների ուսումնասիրությունը, ինչպես խոստովանեց դեկան Կարեն Արամյանը, ցույց է տալիս, որ դրանք համակարգչային եղանակով կազմակերպելը չարիքներից փոքրագույնն է: Այն, որ նվազել է մարդկային գործոնի առկայությունը՝ ողջունելի է, ասաց դեկանը: Այդուհանդերձ, Կ. Արամյանի կարծիքով, դա ժամանակավոր երևույթ է և քննությունների ավանդական ձևն ավելի ընդունելի է: Համակարգչային ձևով քննություն հանձնողների առաջադիմությունը բարձր է, հատկապես՝ 1-ին կուրսեցիներինը: Պետք է ավելացնել թեստերի քանակը և ուշադրություն դարձնել դրանց որակին: Շտկումներ պետք է արվեն: Բացասականն այն է, որ դասախոսը քննության ժամանակ զրկված է ուսանողի հետ անմիջական շփումից, նկատեց Կ. Արամյանը:

Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստության ֆակուլտետում 1-4-րդ կուրսերի համար քննություններն անց են կացվել հետևյալ կերպ.14 առարկայից առանց եզրափակիչ գնահատման և եզրափակիչ գնահատումով 8 ստուգումներ: Բոլոր ուսանողները՝ թվով 75 հոգի, թույլատրվել են մասնակցել ստուգումներին: 1-ին կուրսի երկու ուսանողի կողմից եղել է բողոքարկում՝ կապված տեխնիկական պատճառների հետ: Հարցը լուծվել է հօգուտ ուսանողների: Տեղ գտած բացթողումը ժամանակին վերացվել է: Ստուգարքներին չի մասնակցել 13 ուսանող: Դեկան Շահեն Այդինյանի խոսքերով՝ թեստերի մշակումը տվել է իր դրական արդյունքը: Դեկանը բացասականը համարեց այն, որ ուսանողների համար չի ապահովվում միջին բարդության հարցաշար:

Տնտեսահրավաբանական ֆակուլտետում, ըստ դեկան Վոլոդյա Մանասյանի, արդյունքներն այսպիսին են. առանց եզրափակիչ գնահատման ստուգումներում նախատեսված էր 413 ուսանողի մասնակցություն: Նրանցից 6-8 միավոր է ստացել 154 հոգի, 1,3-5,8 միավոր՝ 153-ը, 1 և ցածր միավոր՝ 14-ը, իսկ 22 հոգի չի ներկայացել ստուգումներին: Ինչ վերաբերում է եզրափակիչ գնահատման ստուգումներին՝ մասնակցել է 933 ուսանող: 6-8 միավոր են ստացել 445-ը, 431 հոգի ստացել է 1,3-5,8 միավոր, 68-ը՝ 1 և ցածր միավորներ: Ստուգումներին չի մասնակցել 49 ուսանող: Ընդհանուր առմամբ՝ ստուգումները կազմակերպվել և անց են կացվել պատշաճ մակարդակով, անձամբ ինքը՝ դեկանը մասնակցել է բոլոր քննություններին: Համեմատելով նախորդ կիսամյակի հետ, Վ. Մանասյանը հավաստիացրեց, որ այս կիսամյակում 1-ին կուրսեցիների մոտ արդյունքներն ավելի բարձր են եղել:

Ճարտարագիտության ֆակուլտետում՝ 2-4-րդ կուրսերում 36 ստուգումներին մասնակցել է 323 ուսանող: Արդյունքները հետևյալն են. 6-8 միավոր է ստացել 49 ուսանող, 1,3-5,8 միավոր՝ 154-ը, 1 և ցածր՝ 11 հոգի: Ինչ վերաբերում է 1-ին կուրսեցիներին՝ ընթացիկ տասը քննություններին մասնակցել է 147 հոգի, 6-8 միավոր է վաստակել 71

3

ԳԻՐՔ, ՈՐԸ ՆԱԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՏՈՒՐՔ Է

Ապրիլի 30-ին Արցախի մայր բուհի գիտական նիստերի դահլիճում տեղի ունեցած գրքի շնորհանդեսը ոչ սովորական միջոցառում էր, քանզի բացակա էր հեղինակը: ԱրՊՀ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու, երջանկահիշատակ Մարինա Առստամյանը չտեսավ իր գրքի ծնունդը, չնայած գիտական թեզը պատրաստ էր դեռևս 2002 թվականին: Այդ էր նաև պատճառը, որ դահլիճում նստածների հայացքներում թախիծ ու ցավ կար: Շնորհանդեսին ներկա էին ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, դասախոսներ, ուսանողներ, Մ. Առստամյանի հարազատները: Ներկա էր նաև Հանրապետության առաջին տիկին Անահիտ Սահակյանը:

Ընթերցողի սեղանին է մի գիրք, որով ոչ միայն հիշատակի ու հարգանքի տուրք է մատուցվում մեր շարքերից անսպասելի ու անհիշատակ հեռացած դասախոսի և գիտնականի, այլև ողջակիզված մի ողջ ժողովրդի հիշատակին: Այսպես է մեկնաբանել գրքի լույսընծայման անհրաժեշտությունը Աժ նախագահ Աշոտ Ղուլյանը, ով հանձն է առել ձեռնարկի հովանավորությունը: Այն նվիրված է գերմանական և ավստրիական գրականության մեջ Հայոց ցեղասպանության թեմային: Գործընկերների հավաստմամբ՝ Մ. Առստամյանի գիտական ղեկավար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Էդոյանն է նրան առաջարկել անդրադառնալ այս թեմային՝ հաշվի առնելով նրա արդիականությունը, ինչպես նաև Մարինայի գերմաներենի իմացությունն ու անձնական նախասիրությունները: Իր գիտական աշխատության համար Մ. Առստամյանն ընտրել է երեք նշանավոր հեղինակների՝ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հանրահայտ վեպը, Վեգների հրապարակախոսական ելույթները, նամակները, մենագրություններն ու պատմվածքները և Էդգար Հիլզենրաթի «Վերջին մտքի հեքիաթը» վեպը: Եվ եթե առաջին երկու անունները վաղուց հայտնի են եղել մեր գրականագիտության մեջ, ապա Էդգար Հիլզենրաթի անունը գրեթե անծանոթ էր հայ իրականությանը: ԱրՊՀ հայ բանասիրության և լրագրության ֆակուլտետի դեկան Հովիկ Մուսայելյանի խոսքով՝ Մարինա Առստամյանի ուսումնասիրությունն առաջին լուրջ մոտեցումն է Հիլզենրաթի «Վերջին մտքի հեքիաթը» վեպին: «Նա, հիրավի, կարողացավ գիտական պատշաճ լուծումներ տալ իր առջև դրված խնդիրներին,- ասաց Հ. Մուսայելյանը:- Դժվար է պատմությունը գեղարվեստականացնել, իսկ Մարինան կարողացավ նկատել այդ գրողների պատմական փաստերը տեսնելու, գեղարվեստականացնելու հնարանքները և գիտական ճիշտ մոտեցումներ տալ երևույթներին»:

Գրքի մասին իր կարծիքը հայտնելով՝ ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանը մասնավորապես ասաց. «Մարինա Առստամյանի գրքից պարզ երևում է, որ Հայոց մեծ եղեռնը շարունակում է հուզել ոչ միայն քաղաքական և իրավական ոլորտի մարդկանց, այլև գեղարվեստական խոսքի ականավոր դեմքերին»:

Այն փաստը, որ գերմանացի և ավստրիացի գրողների՝ Հայոց մեծ եղեռնին նվիրված ստեղծագործությունները՝ որպես թեմա, քիչ են շոշափված մեր գրականության և գրականագիտության մեջ՝ խոստովանեցին ելույթ ունեցողները, ինչն էլ ավելի ընդգծեց գրքի կարևորությունը:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանի համոզմամբ՝ դա պարզապես խիզախում է, քանզի այս փաստերի առաջքաշումը, դրանց հիման վրա եզրակացությունների հանգելը բավականին հետաքրքիր են հայ ընթերցողների համար: «Եթե ուզում ենք մեր ցեղասպանության մասին ճշմարիտ խոսք ասել՝ մենք պետք է հենվենք ոչ միայն մեր, այլ նաև ուրիշների խոսքի վրա»,- ասաց Վ. Հակոբյանը: Իսկ ԱրՊՀ պրոֆեսոր, հոգեբան Արզիկ Մխիթարյանի խոսքերով՝ գիրքը հայտնություն է նաև նրանով, որ երիտասարդ գիտնականը, հանձն առնելով Հայոց ցեղասպանության թեման, օտարի աչքերով վեր է հանել հայ ժողովրդի պատմության ամենաարյունոտ էջերը:

«Ռուսախոս, ռուսական գրականության, ռուսաց լեզվի մասնագետը հանկարծ ձեռք է մեկնել նման թեմայի, ինչը և՛ զարմանալի, և՛ միաժամանակ հաճելի է: Ես կարծում եմ, որ մատչելի լեզվով գրված այս աշխատանքը ոչ միայն հայկական, այլև ռուսաց լեզվի և գրականության բաժինների ուսանողների համար խիստ անհրաժեշտ է»,- ասաց Արզիկ Մխիթարյանը:

Բարի, հայրենասեր, բարձր ոգու տեր անձնավորություն. այսպես են հիշում նրան՝ Մարինա Առստամյանին ճանաչողները: ԱրՊՀ պրոռեկտոր Վահրամ Բալայանի խոսքերով՝ գրքում նկատելի է նրա պայքարի ոգին: Նա ապրում էր այդ գաղափարով:

Սուսաննա ՀՈՎՍԵՓՅԱՆ

Լրագր., 1-ին կուրս



ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ, ՈՐ ԸՆՏՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃԻՇՏ Է

2

ուսանող կամ 77 %-ը, 1,3-5,8 միավոր՝ 64 ուսանող կամ 43,5 %-ը, 1 և ցածր՝ մեկ ուսանող: Քննություններին չի ներկայացել 5 ուսանող: Դեկան Գագիկ Բաղունցի հավաստմամբ՝ չներկայացած ուսանողներին հնարավորություն է ընձեռվել հանձնել քննությունները և բոլորն էլ ստացել են դրական գնահատականներ: Այս տարի ճարտարագիտական ֆակուլտետը կունենա 64 շրջանավարտ:

Հայ բանասիրության և լրագրության ֆակուլտետում եզրափակիչ գնահատումով դասընթացներին մասնակցել է 426 ուսանող, որից 6-8 միավոր է ստացել 166 ուսանող, 188 հոգի գնահատվել են 1,3-5,8, իսկ 51-ը ստացել են 1 և ցածր միավորներ: Ինչպես նշեց դեկան Հովիկ Մուսայելյանը՝ ընթացիկ հարցումներին չի մասնակցել 18 ուսանող:

Քիմկենսաբանության ֆակուլտետում 1-ին կուրսերում ստուգումներին մասնակցած 157 ուսանողից 131-ը ստացել է 6-8 միավոր, 25 հոգի՝ 1,3-5,8 միավոր են վաստակել: Չի մասնակցել ընդամենը մեկ ուսանող՝ հարգելի պատճառով: Նշված կուրսերում 1 և ցածր միավոր ստացողներ չեն եղել: 2-4-րդ կուրսերում ստուգումներին մասնակցել է 377 ուսանող, որից 176-ը ստացել է 6-8 միավոր, 164-ը՝ 1,3-5,8, 17 հոգի ստացել է 1 և ցածր միավորներ, իսկ 17-ը չեն մասնակցել քննություններին: Քննություններն առավել թափանցիկ դարձնելու նպատակով դեկան Վոլոդյա Միրզոյանը հանդես եկավ կոնկրետ առաջարկությամբ. որևէ լսարանում տեղադրել տեսախցիկ՝ ընթացիկ քննություններին հետևելու համար:

Ինչ վերաբերում է ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի և ամփոփիչ ատեստավորման քննությունների նախապատրաստմանը, բոլոր ֆակուլտետների դեկանները միանշանակ հավաստիացրին, որ դրանց ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներն ավարտման փուլում են, հանձնաժողովների նախագահները տեղեկացված են քննությունների ժամանակացույցին:

Դեկանների տեղեկատվության առնչությամբ իր խոսքում ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանը նշեց, որ գրեթե բոլոր ֆակուլտետներում չլուծված է մնացել ուսման վարձավճարների հարցը և դեկանների ուշադրությունը հրավիրեց դրան: Ս. Դադայանի խոսքերով՝ գոհացուցիչ է այն փաստը, երբ դեկաններն իրենք քննադատաբար են մոտենում այս կամ այն հարցին: Նա միաժամանակ կարևորեց ամբիոնի վարիչի և դեկանի ներկայությունը համակարգչային քննությունների կազմակերպման ժամանակ: Նոր ուսումնական տարվանից, ըստ ռեկտորի, հավանաբար դա հաշվի կառնվի:

Ընթացիկ ստուգումներին և եզրափակիչ քննություններին ուշադրությամբ հետևել է ԼՂՀ ԿԳ նախարար Սլավա Ասրյանը: Իր խոսքում նախարարը նշեց, որ ուսումնական տարվա սկզբին և ընթացքում համալսարանականների հետ կայացած հանդիպումները տվել են իրենց արդյունքը: Նիստում ներկայացված տեղեկատվությունը հուշում է, որ գրեթե բոլոր ֆակուլտետներն արձանագրել են նույն ցուցանիշները: Սա նշանակում է, որ ընտրված համակարգը ճիշտ է: Միևնույն ժամանակ, ըստ Ս. Ասրյանի, 100 տոկոսանոց օբյեկտիվ քննություն չի լինում. անշուշտ, լինում են նաև շեղումներ, որոնց կարող է նպաստել հոգեբանական գործոնը: Կամա թե ակամա՝ ժամանակն ամեն ինչ իր տեղը կդնի, ապագան քննությունների անցկացման այս ձևին է պատկանում, և նշված հարցում որևէ կասկած կամ խնդիր չպետք է լինի, ասաց նախարարը: Ս. Ասրյանի խոսքերով՝ անհրաժեշտ է տարեցտարի համալրել թեստային համակարգի բազան. պետք է լինեն ոչ թե զուտ մեխանիկական, այլև տրամաբանական հարցեր:

Ի պատասխան՝ ռեկտոր Ս. Դադայանը նշեց, որ կոլեկտիվը ըմբռնումով կմոտենա հնչած դիտողություններին ու առաջարկություններին: Ռեկտորը հավաստիացրեց, որ համալսարանում չի եղել նման դեպք, երբ քննությանը չներկայացած կամ հարցերին չպատասխանած ուսանողը գնահատական ստանա: Այդ են վկայում պետական ավարտական քննություններից հարյուրից ավելի անբավարար գնահատականները:

Նիստն ի գիտություն ընդունեց 2-րդ կիսամյակի ընթացիկ հարցումների արդյունքների մասին դեկանների տեղեկատվությունը: Ամբիոնների վարիչներին հանձնարարվեց լուրջ ուշադրություն դարձնել թեստային առաջադրանքների կազմմանն ու համակարգիչ մտցնելու գործընթացներին: Ֆակուլտետների դեկաններին առաջարկվեց շրջանավարտների դիպլոմների հանձնումը կազմակերպել հանդիսավոր պայմաններում:

Ի գիտություն ընդունվեց նաև դեկանների տեղեկատվությունը՝ ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի և ամփոփիչ ատեստավորման քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին: Հանձնարարվեց դրանք ավարտին հասցնել մինչև մայիսի 15-ը:

Օրակարգի հաջորդ հարցը վերաբերում էր նոր մասնագիտությունների ուսումնական պլաններին: ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Արտեմ Աբրահամյանը գիտխորհրդի հաստատմանը ներկայացրեց «Կենսաբանական ճարտարագիտություն» նոր մասնագիտության ուսումնական պլանը, որի համար ընդունելություն պետք է կատարվի:

Քննարկված մյուս հարցը կառուցվածքային փոփոխությունների մասին էր: Հարցի առնչությամբ գիտքարտուղար Գայանե Մարգարյանը նշեց, որ առաջարկվում է ԱրՊՀ համակարգում կատարել կառուցվածքային մի շարք փոփոխություններ: Մասնավորապես՝ հիմք ընդունելով մարտի 29-ին «Սինոփսիս Արմենիա», «Ղարաբաղ Տելեկոմ» ընկերությունների ԱրՊՀ-ի հետ ստորագրված եռակողմ համաձայնագիրը որոշվեց բացել «Կապի միջոցների միկրոէլեկտրոնային սխեմաներ և համակարգեր» համահամալսարանական ամբիոն: Նշվեց, որ ընթացքի մեջ են պարապմունքների կազմակերպման համար նախատեսված հատուկ լսարանի կահավորման նախապատրաստական աշխատանքները:

Այլ հարցերի շրջանակում նիստը հաստատեց և տպագրության երաշխավորեց ԱրՊՀ դասախոսներից մի քանիսի աշխատություններն ու ուսումնամեթոդական ձեռնարկները:

Նիստում լսվեց նաև այլ բուհերի փորձն ուսումնասիրելու և ԱրՊՀ աշխատողների աշխատավարձի չափի սահմանման ժամանակավոր կարգում համապատասխան փոփոխություն մտցնելու նպատակով հատուկ հանձնաժողովի ստեղծման մասին հարցը: Այդ կապակցությամբ գիտքարտուղար Գայանե Մարգարյանն իրազեկեց, որ առ այսօր հայկական բուհական համակարգում չկա աշխատավարձի չափի սահմանման հստակ մշակված և ընդհանրացված կարգ, չնայած կան տարբեր կարգեր հավելավճարների տրամադրման վերաբերյալ և ԱրՊՀ-ում աշխատողների աշխատավարձի չափի սահմանման ժամանակավոր կարգը որպես այդպիսին ընդունվել է առաջին անգամ:

Հատուկ հանձնաժողովի ստեղծման կապակցությամբ հարցի քննարկումից հետո ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանը առաջարկեց նորաստեղծ հանձնաժողովի նախագահ նշանակել ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ Կարեն Ներսիսյանին և հանձնարարել նրան մեկ շաբաթվա ընթացքում ռեկտորատի քննարկմանը ներկայացնել հանձնաժողովի կազմում ընդգրկելու համար նախընտրելի անձանց անունները:

Մեկ այլ հարցի առնչությամբ նիստը որոշեց ԱրՊՀ պատվավոր դոկտոր, ակադեմիկոս Յուրի Սուվարյանին՝ ծննդյան 70-ամյակի կապակցությամբ պարգևատրել ԱրՊՀ ոսկե մեդալով:

Օրակարգի վերջին հարցը ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի թափուր տեղերի համար հայտարարված մրցույթի անցկացման մասին էր: Փակ գաղտնի քվեարկության արդյունքում պրոֆեսորի թափուր տեղերում ընտրվեցին. քիմիայի ամբիոնից՝ Արտեմ Աբրահամյանը (33 կողմ, 4 անվավեր, դեմ՝ չկա), մաթեմատիկայի և ֆիզիկայի դասավանդման ամբիոնից՝ Ռուդիկ Առաքելյանը (35 կողմ, 1 դեմ, 1 անվավեր), պատմության ամբիոնից՝ Արարատ Վարդանյանը (34 կողմ, 1 դեմ, 2 անվավեր):

Դոցենտի թափուր տեղերում ընտրվեցին. Լիանա Աբրահամյանը՝ մաթեմատիկայի ամբիոն (37 կողմ, դեմ 0, անվավեր 0), Սմբատ Սաղյանը՝ քիմիայի ամբիոն (36 կողմ, 1 դեմ, 0 անվավեր), Արմիդա Հակոբյանը՝ կենսաբանության ամբիոն (37 կողմ, 0 դեմ, 0 անվավեր), Հասմիկ Գալստյանը՝ կենսաբանության ամբիոն (37 կողմ, 0 դեմ, 0 անվավեր), Զոյա Պետրոսյանը՝ կենսաբանության ամբիոն (37 կողմ, 0 դեմ, 0 անվավեր), Սիլվա Խաչատրյանը՝ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն (35 կողմ, 2 դեմ, 0 անվավեր), Կարինե Ավանեսյանը՝ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն (37 կողմ, 0 դեմ, 0 անվավեր):

Ամբիոնի վարիչի թափուր տեղերում ընտրվեցին. Սուսաննա Հայրապետյանը՝ ֆիզիկական դաստիարակության ամբիոն (36 կողմ, 0 դեմ, 1 անվավեր), Դեղամ Միքայելյանը՝ ճարտարագիտության ամբիոն (31 կողմ, 5 դեմ, 1 անվավեր):

Լաուրա ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Մայիսի 7-ը Արցախի մայր բուհում նշանավորվեց ինչպես մայիսյան հաղթանակների, այնպես էլ փետրվարյան ֆեդերացիաների վերարժևորումներով. մանկավարժական ֆակուլտետի կերպարվեստի բաժնի ուսանողները տարվա աշխատանքների ցուցահանդես, իսկ պրոֆեսորադասախոսական կազմը՝ ներբուհական գիտական ընթերցումներ են կազմակերպել:

Ուսումնական տարվա այս ժամանակահատվածում ԱրՊՀ միջանցքներն ու պատերը յուրահատուկ գույներ են ստանում: Կերպարվեստի բաժնի ուսանողների ցուցահանդեսը նվիրված է Մայիսյան եռատոնին: Այստեղ հիմնականում ներկայացված են ուսանողների մեկ տարվա կատարած աշխատանքները: ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանը շնորհավորանքի իր խոսքում նշեց, որ նմանատիպ ցուցահանդեսները հատկապես կարևոր են նրանով, որ ուսանողներին հնարավորություն է ընձեռվում քննադատաբար մոտենալ իրենց գործերին: «Համոզված եմ, որ հաջորդ ցուցահանդեսներին ձեր ներկայացված գործերն ավելի որակյալ ու փայլուն կլինեն»,- ասաց ռեկտոր Ս. Դադայանը:

«Յուրաքանչյուր տարի դուք ի մի եք բերում ձեր արած-թողածը, գնալով հասունանում եք: Դուք դա երևի թե զգում եք ինքներդ, քանզի այսօր բավականին ներկայանալի ցուցահանդես է»,- ասաց մանկավարժության ֆակուլտետի դեկան Արզիկ Սխիթարյանը:

Նույն օրը համալսարանի գիտխորհրդի նիստերի դահլիճում անցկացված գիտաժողովը նվիրված էր Արցախյան շարժման 25-ամյակին: Նախաձեռնությունը ԱրՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Վահրամ Բալայանինն էր: Նշենք, որ նման գիտաժողովների անցկացումը վերջին տարիներին բուհում ավանդույթ է դարձել: «Մեր համալսարանում կան բազմաթիվ ամբիոններ, որոնց մասնագետներն ուսումնասիրությունների տարբեր ոլորտներ ունեն, սակայն հնարավորություն չունեն իրենց տեսակետները ներկայացնել թեմատիկ գիտաժողովներում: Ներբուհական ընթերցումների ժամանակ ստեղծվում է այդ հնարավորությունը»,- ասաց պրոռեկտոր Վ. Բալայանը:

Լիագումար նիստում ներկաները երկու զեկուցում են լսել, որոնցից մեկի՝ Տիգրանակերտի ամրացված տեղամասի պեղումների հիմնական արդյունքների մասին գիտական ընթերցմամբ հանդես է եկել ԱրՊՀ պատմության ամբիոնի վարիչ Վարդգես Սաֆարյանը: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախումբը 2005 թվականին է հայտնաբերել հայոց արքա Տիգրան Մեծի՝ Արցախում հիմնած Տիգրանակերտ քաղաքը և 2006 թվականից հնագիտական պեղումներ է կատարում այդ տարածքում: Այն Տիգրանի անունը կրող միակ բնակավայրն է, որի տեղը ճշտորեն պարզված է և ենթարկվում է հնագիտական հետազոտության: Պեղումների արդյունքում բացվել են քաղաքի միջնաբերդի պարիսպների մի հատվածը, ամրացված թաղամասի պարիսպների ժայռափոր հիմքերը, կենտրոնական թաղամասի բազիլիկ եկեղեցին, կատարվել են հետախուզական պեղումներ: Արդյունքում արշավախմբի մշտական կազմում ընդգրկված Վարդգես Սաֆարյանի հավաստմամբ՝ Խաչենահովտի էթնոմշակութային դիմագիծը կհաջողվի պարզել: Հետաքրքրական է, որ Աղրբեջանն ուշադրությամբ հետևում է հայկական պատմական այդ հատվածում արվող յուրաքանչյուր բացահայտման և փորձելով խեղաթյուրել փաստերը՝ մշտապես հայտնվում է զավեշտալի իրավիճակներում: «Ասում են, որ մենք այդ տարածքները լավ գիտենք, որ դա ոչ թե հայկական Տիգրանակերտն է, այլ աղվանական քաղաք է: Ոմանք էլ ասում են, թե հայերն ընդհանրապես այնտեղ ոչինչ չեն գտել, բայց դրա հետ միասին իրենց կայքէջերում տեղադրում են մեր գտած նյութերը: Մի քանիսն էլ գրում են, թե հայերը բերում, ինչ-որ բան են հողի տակ դնում, հետո՝ հանում: Մարդու ծիծաղ է շարժում պարզապես… Ինչպե՞ս կարելի է մեկ տոննանոց քարը տեղադրել և նորից հանել… »,- ասաց Վարդգես Սաֆարյանը:

Պատմական քննարկումներին հաջորդեցին կիրառական ոլորտում արված ուսումնասիրություններն ու գիտական վերլուծությունը: Խոսքն այս անգամ Արցախի եթերայուղերի արդյունավետ օգտագործմանն էր վերաբերում: Արցախի պետականության կայացման կարևոր պայման է գիտության և կրթության զարգացումը, գիտական մտքի և տնտեսական ուժի ամբողջական օգտագործումը: Այս համատեքստում կարևորվում է Արցախի եթերայուղերով հարուստ բույսերի ուսումնասիրումն ու եթերայուղերի ստացումն ու դրանց կիրառումը: «Արցախի այնպիսի եթերայուղաձուներ, ինչպիսիք են ուրցը, ռեհանը, գինձը, դեղային երիցուկը և շատ այլ բույսեր, օժտված են բազմաթիվ արժեքավոր հատկություններով, որոնք շատ բարձր են գնահատվում աշխարհում և արտադրվում են մի շարք երկրներում»,- ասաց ԱրՊՀ դասախոս Արդիանա Ղուլյանը:

Ներբուհական գիտական ընթերցումներն այնուհետև շարունակվեցին մասնախմբային նիստերում:

Անժելիկա ՔԱՄԱԼՅԱՆ

Լրագր., 1-ին կուրս

«ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԱՐՈՒՆ»՝ ԳԱՐՆԱՆ ԲՈԼՈՐ ԳՈՒՅՆԵՐՈՎ ՀԱԳԵՑԱԾ…

Արվեստի ստեղծագործությունները նման են մարդկանց, իսկ արվեստի ընկալումը միայն այն ժամանակ կարող է իսկական հաճույք պատճառել, երբ գոյություն ունի ընկալման արվեստ: Ահա և դրա մի բնօրինակ:

Ուսանողական կյանքի եռուզեռ, գույների խտացում և արվեստի ներդաշնակ դրսևորում…

Մի խոսքով՝ անզուգական ելույթների հերթագայություն, վարարուն ժպիտներ, հիացմունք, խինդ, զավեշտանք, զարմանք ու բավականություն…

Այս բոլորի հանրագումարից ծնունդ է առնում այն լուսատու աստղաբույլը, որ կոչվում է «Ուսանողական գարուն» փառատոն: Փառատոնի շրջանակներում կրկին համալսարանականները նոր գույներ սփռեցին բեմական կոլորիտում: «Գալա համերգ» անցած լավագույն կատարումները լիովին առնչվում էին ներհամալսարանական եռուզեռին, դասախոս-ուսանող փոխհարաբերություններին, տիրող քաղաքական անցուդարձին և ի վերջո, սիրո անհուն ու անսպառ թեմաներին: Ուսանողների կերտած բեմախաղը եկավ լրացնելու կենսական փոխհարաբերություններում տեղ գտած ցայտուն երևույթների յուրովի արտացոլումը: Սիրո խոստովանություն՝ այն էլ մասնագիտական լեզվով ու յուրահատկությամբ, այնուհետև վիրաբուժական զավեշտական միջամտություն՝ քիմկենսաբանական ֆակուլտետի ուսանողների կողմից, առնական խրոխտ հայրենասիրական պարերի կերտում՝ ճարտարագետների և բանասերների կողմից, քաղաքագիտական զանազան հարցերի վիճարկում՝ քաղաքագետների կողմից, անհայտ երևույթների որոնում, բարձրաճաշակ երգարվեստ՝ ֆիզիկամաթեմատիկական բաժնի մասնակիցների կողմից, ժամանակակից ռիթմեր՝ ֆիզպատրաստության բաժնի տղաների և օտար լեզուների բաժնի աղջիկների համադրությամբ, գեղեցիկ նազանք՝ մանկավարժների մատուցմամբ:

Լավագույն ելույթների անհատ կատարողները մայր բուհի կողմից արժանացան պատվոգրերի, դրամական պարգևների: Իսկ հանդիսատեսի կողմից՝ ջերմ հիացմունքի խոսքերի:

Վիտալի ՅԱՐԱՄԻՇՅԱՆ, ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր.

- Արվեստը, մշակույթը խոսքի ու մարմնի շարժման արտացոլումն է: Այսօր մենք տեսանք այդ համադրումը ուսանողի կեցվածքում: Այսօր մենք ըմբոշխնեցինք այդ խտացումը «ուսանող-արվեստագետ» կերպարում: Արվեստը նաև մարդկային ոգու ստեղծագործություն է: Այս կերպարում, անշուշտ, առկա էր նաև ոգին, որն առավել ընդգծեց արվեստի գույները: Արվեստը հավատարիմ է իրականությանը, իսկ ստեղծագործ լինելու շնորհիվ և իրականության թելադրանքով ուսանողը ստեղծեց իրապատումներ՝ գեղեցիկ կատարումների տեսքով: Ամեն մի ասելիք գալիս է սրտից ու պետք է հասնի սրտին, ինչն էլ լիովին հասանելի էր այս միջոցառման ընթացքում: Շնորհավորում եմ բոլոր ուսանողներին, մաղթում նոր մտահղացումներ և հաջողություններ:

Իրինա ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, քաղաքաշինության ամբիոնի դասախոս.

- Խոսքը, շարժումը կարելի է ստեղծագործաբար զգեստավորել, նրան տալ այնպիսի կեցվածք, որի ներսից կարող է դուրս հորդալ հայրենասիրության ու ազգասիրության շունչը: Եվ պատահական չէ, որ հենց մեր ֆակուլտետի տղաները փաստեցին այն հանգամանքը, որ նրանք ուսանող լինելուց զատ, շինարար ու ճարտարագետ լինելուց առավել, կառուցող լինելուց բացի, նախ և առաջ հայրենասեր են ու արվեստասեր: Ոգևորված ու ոգեշնչված եմ բոլորի ելույթներից, շնորհավորում եմ բոլորին և մաղթում արվեստի նկատմամբ մեծ սեր, նվիրվածություն և բարձունքներ:

Վիկտորյա ՊԵՏՐՈՍՅԱՆ, հայոց լեզու, մագիստրատուրա 2-րդ կուրս.

- Մայիսի 22-ին կայացած «Ուսանողական գարուն» փառատոնի ճոխ գալա համերգին, անշուշտ, ակտիվ մասնակցություն ունեցան տարբեր ֆակուլտետների ուսանողներ: Հանդիսատեսի կողմից ընտրված և հավանության արժանացած առավել հետաքրքիր համարներն անցան գալա համերգի շրջանակներ: Հանդիսատեսը իրոք մեկ անգամ ևս ըմբոշխնեց մասնակիցների դերասանական հմտությամբ կառուցված խաղը: Հատկանշական է, որ կային շատ ճաշակով հումորներ, պարեր, երգեր: Պարզապես հիացմունք ապրեցի ճարտարագիտական ֆակուլտետի ուսանող Արարատ Գրիգորյանի մատուցած «Զինվորի երգը» կատարումից: Շնորհավորում եմ բոլորին և շնորհակալ եմ նման հիասքանչ միջոցառման կազմակերպիչներից՝ ի դեմս ռեկտորի, ուսվարչության և ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտորի:

Արսեն ԽԱՉԱՏՐՅԱՆ, մասնակից.

- Արվեստն ինձ համար հոգևոր սնունդ է: Ես այսօր լիովին ճաշակեցի այն՝ այն էլ մասնակցի կարգով: Ծանոթացա նոր ընկերների հետ, ապրեցի հետաքրքիր ու անմոռաց պահեր: Շատ հավանեցի ուսանողների մատուցած պարերը, հումորային խառնաշփոթը: Բոլոր ֆակուլտետներն էլ շատ լուրջ ու պատասխանատվությամբ էին տրամադրված և լավ էին նախապատրաստվել ելույթներին: Դժվար էր կողմնորոշվել, թե կոնկրետ որ ֆակուլտետը հատեց մրցութային եզրագիծը: Նրանցից յուրաքանչյուրն էլ ուներ գեղեցիկ ու եզակի համարներ, որոնք էլ արժանացան հանդիսատեսի ջերմ ընդունելությանը: Ես այսօր տեսա և զգացի գարնան գրեթե բոլոր գույները: Հուսով եմ, գալիք գարնանը այդ գույները կեռապատկվեն:

Հասմիկ ՀԱԿՈԲՅԱՆ, բանասեր, նախկին շրջանավարտ.

- Բառը բանաստեղծի զենքն է, իսկ մեր ուսանողների համար զինված լինել մտքի ուժով և մարտահրավեր նետել մեկմեկու՝ բավական էր հենց այս միջոցառման մեկնարկը: Բոլորն էլ լավ ու վճռական էին նախապատրաստվել պայքարին: Ինձ թվում է հաղթեց մայր համալսարանը՝ իր տաղանդաշատ ուսանողներով: Ես հպարտ եմ, որ նույնպես այս կրթօջախի սանն եմ և նույնպես մասնակցություն եմ ունեցել ուսանողական գարուններին: Պոեզիան իմ աշխարհն է, և հետաքրքիր էր ուսանողների մատուցմամբ լսել հոգեհարազատ կատարումներ: Շնորհավորում եմ բոլորին: Կսպասենք մյուս բացվող գարուններին:

Արվեստն ամենագեղեցիկ, ամենախիստ, ամենաուրախ ու բարի խորհրդանիշն է: Ասում են, որտեղ վերջանում է բառը, այնտեղից սկսվում է երաժշտությունը: Ուսանողական ակտիվ կենսակերպին նոր թափ ու լիցք են հաղորդում յուրատիպ միջոցառումները, ինչպիսին «Ուսանողական գարուն» փառատոնն է:

Համոզված ենք, որ յուրաքանչյուր ուսանողական գարուն մի նոր երանգ է հաղորդում ուսանողական կյանքի հարմոնիային: Մնում է պարզապես ամեն բացվող գարնան դառնալ ունկնդիրն ու հանդիսատեսը ուսանողական գարնան նորահուն հնչյունների:

Անահիտ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ՝
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5
հեռ. 94-04-91

Տպագրվում է
«ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում
Տպագրված նյութերում տեղ գտած փաստերի համար պատասխանատու են հեղինակները

Խմբագիր՝
ԼԱՈՒՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ